

## ԵՐԱԶ

Կեզ.

ՆԺԴ. ԵՀԻ

Տանջանքից յոդնած տառապեալ հոգիս  
Ընկըզմւեց քընի օրօրող ալիս.

Եւ քաղցր երազ թեթև թեւերով  
Տարաւ ինձ եղեմ, սար, դաշտ անցնելով:

Ճելմ, թեթև, մեղմ օդ, լոյս առատ, քնքոյշ  
Լըցրած են չքնաղ ալն եղեմ անոյշ.  
Եւ ես երջանիկ, ուրախ, իմ գրկում  
Տեսնում եմ նորան, լալիս, դանդատւում:

Գեղանի իր գլուխ կալցրած նա կուրծքիս,  
Ճեզ, պարզ իր աչեր դարձրած երեսիս,  
Մընջում էր նա, ժապում, արտասւում,  
Եւ սիրոյ խօսքեր ականջիս հընչում:

Մոռացալ ես վիշտը, կարօտ ու տանջանք.  
Կարծում էի թէ՝ այսու յաւիտեան  
Բաժանելու չէ դըժնեալ հանգամանք,  
Եւ արդէն հասալ վալը երջանկութեան...

Բալց ահա, ցնցւած ես անոյշ քընից,  
Տեսալ ինձ մենակ, հեռու նորանից.  
Եւ վիշտ մշտաքաղց դարձեալ ինձ տիրեց,  
Տառապեալ իմ սիրտ թախիծը գերեց: